



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ն Ա Ն Ա Գ Ա Հ

6, Vazgen Sargsyan str., 0010, Yerevan
Tel.: (37410) 583 841
Fax: (37410) 565 496

0010, Երևան, Վազգեն Սարգսյան, 6
Հեռ. (37410) 583 841
Ֆաքս (37410) 565 496

0010, Ереван, Вазгена Саркисяна, 6
Тел.: (37410) 583 841
Факс: (37410) 565 496

30.04.2014 N 08-04/000100-14

Ձեր N _____

Հայաստանի Հանրապետության Վարչապետ
պարոն Հովհիկ Աբրահամյանին


Մեծարգո պարոն Վարչապետ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ և 31-րդ հոդվածներով՝ Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի ապրիլի 29-ի թիվ 102 Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը»:

Առդիր՝ 5 էջ:

Հարգանքով՝

Արթուր Զավադյան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԿՈԴ

050.0102 Ա. 29.04.14

29 ապրիլի 2014 թվականի թիվ 102 Ա

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ և 31-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է .

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
2014 թ. ապրիլի 30
Երևան**



Արթուր Զավադյան

ՀՀ կենտրոնական բանկի եզրակացությունը
«ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան
հաշվետվությունը հաստատելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

2012 թվականին արձանագրված ՀՀ տնտեսական աճի բարձր տեմպերը շարունակվեցին 2013 թվականի առաջին եռամսյակում, իսկ երկրորդից սկսած տնտեսական ակտիվությունն էապես դանդաղեց՝ պայմանավորված արտաքին և ներքին մակրոմիջավայրերում դրսևորված ռիսկերի ազդեցությամբ: ՀՀ մակրոմիջավայրի հիմնական զարգացումները, ընդհանուր առմամբ, պայմանավորված էին համաշխարհային տնտեսության սպասվածից ավելի դանդաղ աճով, ՀՀ համախառն ներդրումների նվազմամբ, ՀՀ պարտքի կայունությանը միտված գսպող հարկաբյուջետային քաղաքականությամբ, ինչպես նաև էներգետիկայի սակագների աճի բացասական հետևանքներով: Ընդ որում, գազի և էլեկտրաէներգիայի սակագների աճը հանգեցրել է մի կողմից տնտեսության տարբեր ոլորտներում գործող ձեռնարկությունների ծախսերի աճին՝ կրճատելով ձեռնարկությունների ներդրումների համար նախատեսված միջոցները, իսկ մյուս կողմից, գների ընդհանուր մակարդակի աճի միջոցով նվազեցրել է իրական սպառման ծավալները՝ անդրադառնալով տնտեսական ակտիվության դանդաղման վրա:

Այսպիսով, տարվա արդյունքում, տնտեսական աճը նախորդ տարվա 7.2 տոկոսի դիմաց կազմել է 3.5 տոկոս, որի ձևավորմանը հիմնականում նպաստել են ծառայությունների, գյուղատնտեսության և արդյունաբերության ճյուղերում արձանագրված իրական աճերը: Ընդ որում, ծառայությունների ոլորտի աճը կազմել է 5.3 տոկոս, գյուղատնտեսությանը՝ 8.1 տոկոս և արդյունաբերության ճյուղի աճը՝ 4.9 տոկոս: Անկում է արձանագրվել շինարարության ոլորտում՝ 8.1 տոկոս:

2013 թվականին, հարկաբյուջետային քաղաքականությունը, ուղղորդվելով պակասորդի շարունակական կրճատման և պարտքի կայունության ապահովման

սկզբունքներով, համախառն պահանջարկի վրա, ընդհանուր առմամբ, ունեցել է զսպող ազդեցություն: Ընդ որում, եկամուտների գծով ձևավորվել է զսպող ազդակ, իսկ ծախսերի գծով՝ ընդլայնող: Նման հարկաբյուջետային քաղաքականության արդյունքում արձանագրվել է ՀՀ պետական բյուջեի պակասուրդի էական կրճատում (ծրագրվածի նկատմամբ), որն ուղեկցվելով արդյունավետ կոորդինացված դրամավարկային քաղաքականությամբ, նպաստել է արտաքին հաշվեկշռվածության բարելավմանը, պետական պարտքի կայունության ապահովմանը, ինչպես նաև գնաճի զսպմանը:

2013 թվականին ձևավորված գնաճային միջավայրը բնութագրվում էր՝ տարեսկզբին ցածր և կայուն գնաճային միջավայրով, տնտեսական բարձր ակտիվությամբ, որի պարագայում ՀՀ կենտրոնական բանկը անփոփոխ է թողել վերաֆինանսավորման տոկոսադրույքը: Սակայն էներգակիրների գների բարձրացումն էապես փոխել էր մակրոտնտեսական քաղաքականության միջավայրը: Գնահատելով գների կայունության վրա այդ շուկի ազդեցությունները Կենտրոնական բանկը ճկուն արձագանքել է, սկզբում տոկոսադրույքի բարձրացման միջոցով՝ հնարավոր երկրորդային ազդեցությունները մեղմելու և սպասումները չեզոքացնելու ուղղությամբ, հետագայում՝ երբ արդեն արձանագրվել էր գնաճային միջավայրի մեղմացում և տնտեսական ակտիվության նվազում՝ տոկոսադրույքի շարունակական իջեցման միջոցով:

Պետական բյուջեի եկամուտների ոլորտում իրականացված քաղաքականությունը 2013 թվականին նշանավորվել է հարկեր/ՀՆԱ ցուցանիշի բարձր մակարդակի ապահովմամբ: Տարվա արդյունքներով պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 25.1%-ը, որը 1.44 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը: Նույն պատկերն է նաև հարկային եկամուտների մասով, վերջինս կազմել է ՀՆԱ-ի 23.5%-ը՝ նախորդ տարվա 22.0%-ի դիմաց: Պետական բյուջեի եկամուտների անվանական աճի ցուցանիշը նույնպես բարձր է եղել նախորդ տարվա նույն ցուցանիշի համեմատ՝ կազմելով 13.2%, այն դեպքում, երբ նախորդ տարի այդ ցուցանիշը կազմել էր 7.4%: Ընդ որում, հարկային եկամուտների աճը պայմանավորվել է հիմնականում եկամտային հարկի և

ավելացված արժեքի հարկի աճով, ինչպես նաև շրջանառության հարկի ներդրմամբ:

2013 թվականին ՀՀ պետական բյուջեի ծախսերն ավելացել են 13.6%-ով, որն արձանագրվել է ընթացիկ ծախսերի աճի հաշվին, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով արձանագրվել է ծախսերի նվազում: Պետական ծախսերի աճը հանգեցրել է նախորդ տարվա նկատմամբ ՀՆԱ-ում ծախսերի հարաբերակցության 1.6 տոկոսային կետ աճի: Ընդ որում, ընթացիկ ծախսերի գծով գրանցվել է անվանական աճ 16%-ի չափով, որի պարագայում ընթացիկ ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը աճել է շուրջ 1.9 տոկոսային կետով և կազմել 23.8%, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը 2013 թվականին կազմել են ՀՆԱ-ի 3.0%-ը՝ նախորդ տարվա 3.3%-ի փոխարեն: Արդյունքում, պետական բյուջեի ծախսերը կազմել են ծրագրվածի 90.8%-ը, որը պայմանավորված էր արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի կատարման ցածր մակարդակով (41.1%), որոշ ծախսային ծրագրերով նախատեսված միջոցների տնտեսմամբ, ինչպես նաև առանձին ծրագրերի շրջանակներում իրականացվող գնումների հետաձգմամբ:

Բյուջեի եկամուտների ծրագրված ցուցանիշի ապահովման և ծախսերի գծով վերը նշված տնտեսումների պայմաններում ՀՀ բյուջեի պակասուրդը կազմել է 71.5 մլրդ դրամ, կամ ծրագրվածի 38.8%-ը, որի պարագայում նվազել է պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշը՝ կազմելով 1.7%՝ կանխատեսված (ճշգրտված) 2.6%-ի և 2012 թվականի փաստացի 1.5%-ի դիմաց: Պակասուրդի շեղումը կանխատեսվածից արձանագրվել է ֆինանսավորման թե՛ ներքին, և թե՛ արտաքին աղբյուրների մասով: Տարվա արդյունքում պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրները կազմել են -10.9 մլրդ դրամ, իսկ արտաքին աղբյուրներից զուտ ֆինանսավորումը՝ 82.5 մլրդ դրամ:

Հարկ է նշել, որ ՀՀ պետական գանձապետական պարտատոմսերից զուտ մուտքերի հաշվին պակասուրդի ֆինանսավորման ծրագիրը 10.0 մլրդ դրամով կրճատվել է և փաստացին կազմել է 20.4 մլրդ դրամ՝ ճշգրտված ծրագրին համապատասխան: Վերջինս ուղեկցվել է (2013 թվականի ընթացքում

տեղաբաշխված) պետական (գանձապետական) պարտատոմսերի եկամտաբերության նվազմամբ՝ 4-4.5 տոկոսային կետով: Տոկոսադրույքների նվազումն ապահովվել է արտարժույթային պետական պարտատոմսերի տեղաբաշխման, պետական պարտատոմսերի առաջարկի կրճատման, մեկնարկող կենսաթոշակային բարեփոխումների, ՀՀ ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքի նվազման արդյունքում: Միևնույն ժամանակ աճել է ներքին պետական պարտքի ժամկետայնությունը՝ կազմելով 1901 օր, այն դեպքում երբ 2012 թվականին այն կազմել է 1713 օր:

Ամփոփելով նշենք, որ ուղղորդվելով ՀՀ կառավարության միջին ժամկետ ուղղվածության ծրագրով նախատեսված պարտքի արդյունավետ կառավարման քաղաքականության շարունակականության պահպանման սկզբունքներով, 2013 թվականին ՀՀ կառավարության կողմից իրականացրած հարկաբյուջետային քաղաքականությունն իրական նախադրյալներ կստեղծի մակրոտնտեսական կայունության պահպանման համար և կնպաստի միջին ժամկետում տնտեսական աճի ապահովմանը: